ՏԵՂԵԿԱՆՔ

ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾՈՎ ԼՐԱՑՎՈՂ ԵՎ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հոդված 3. Հայաստանի Հանրապետության ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԲՆԱԳԱՎԱՌԸ

Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառը (այսուհետ՝ էներգետիկայի բնագավառ) հանրային ծառայություններ մատուցելու համար էլեկտրական և ջերմային էներգիայի արտադրության ջերմային էներգիայի և բնական գազի հաղորդման (փոխադրման), բաշխման ու մատակարարման, էլեկտրաէներգետիկական և բնական գազի ոլորտների համակարգերի օպերատորի, էլեկտրաէներգետիկական շուկայի օպերատորի ծառայության իրականացման, էլեկտրական էներգիայի (հզորության) մեծածախ առևտրի, էլեկտրական էներգիայի և բնական գազի ներկրման և արտահանման գործունեության մեջ ներգրավված տնտեսավարող սուբյեկտների (անկախ դրանց սեփականության ձևից), այդ գործունեությունների իրականացման համար անհրաժեշտ գույքի և էներգետիկական շուկային ծառայություններ մատուցող կառույցների համախումբն է:

Հոդված 4. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սույն օրենքի իմաստով օգտագործված հիմնական հասկացություններն են՝

էլեկտրաէներգետիկական շուկա՝ սույն օրենքին և շուկայի կանոններին համապատասխան կազմակերպված՝ էլեկտրական էներգիայի (հզորության) առք ու վաճառքի, պահեստավորման, հաղորդման, բաշխման և (կամ) մատակարարման մեջ ներգրավված էլեկտրաէներգետիկական շուկայի մասնակիցների փոխհարաբերությունների համակարգ, որը բաղկացած է մեծածախ և մանրածախ շուկաներից.

էլեկտրաէներգետիկական շուկայի մասնակիցներ՝ սույն օրենքին և շուկայի կանոններին համապատասխան մեծածախ կամ մանրածախ շուկային մասնակցող՝ էլեկտրական էներգիայի հաղորդման, բաշխման, էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի և էլեկտրաէներգետիկական շուկայի օպերատորի լիցենզիա ունեցող անձինք, ինչպես նաև սպառողները (ներառյալ՝ որակավորված սպառողները).

.1) էներգիայի պահեստավորում (պահեստավորում)՝ էլեկտրաէներգետիկական համակարգում արտադրված էլեկտրական էներգիայի վերջնական սպառման հետաձգում դրա արտադրման պահից ավելի ուշ պահի, կամ արտադրված էլեկտրական էներգիայի վերափոխում էներգիայի այնպիսի ձևի, որը հնարավոր է կուտակել, այդ էներգիայի կուտակում և հետագայում այդ էներգիայի վերափոխում էլեկտրական էներգիայի կամ օգտագործում որպես այլ էներգակիր.

.2) էներգիայի պահեստավորման ծառայությունից օգտվելու երաշխիք (էներգիայի պահեստավորման երաշխիք)՝ սույն օրենքով, ինչպես նաև պետություն-մասնավոր գործընկերություն գործարքներով սահմանված ժամկետներում և ծավալով էներգիայի պահեստավորման լիցենզիա ունեցող անձի կողմից մատուցված էներգիայի պահեստավորման ծառայության պարտադիր ձեռքբերման իրավունք, որը պաշտպանվում է սույն օրենքով, շուկայի կանոններով և պայմանագրերով: Սույն սահմանման իմաստով՝ լիցենզիա ունեցող անձի կողմից մատուցված էներգիայի պահեստավորման ծառայության ծավալ է համարվում էներգիայի այն առավելագույն քանակությունը, որը լիցենզիա ունեցող անձը սույն օրենքի համաձայն պարտավոր է և տեխնիկապես ունակ է պահեստավորել ու հետագայում առաքել էլեկտրաէներգետիկական համակարգ, անկախ այն հանգամանքից, թե տվյալ ժամանակահատվածում այդ կարողությունն օգտագործվել է մասնակիորեն, թե ամբողջությամբ, եթե պահեստավորման ծառայության

չօգտագործումը պայմանավորված է էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի կարգավարմամբ կամ հաղորդման կամ բաշխման ցանցերում առաջացած սահմանափակումներով.

կարգավարում՝ էլեկտրական էներգիայի արտադրության, պահեստավորման, էլեկտրական էներգիայի ու բնական գազի ներկրման, արտահանման և տարանցման հնարավորությունների, ինչպես նաև կանխատեսվող սպառման ծավալների հայտարարագրման ու պլանավորման և իրական ժամանակում էլեկտրական էներգիայի ու բնական գազի պահանջարկն ամբողջ ծավալով բավարարելու նպատակով էներգետիկական համակարգի տեխնոլոգիական կառավարման համար անհրաժեշտ գործընթացի և գործողությունների համախումբ, որը կապահովի սահմանված որակի էլեկտրական էներգիայի ու բնական գազի մատակարարումը՝ հուսալիության և անվտանգության ցուցանիշների պահպանմամբ.

Հոդված 5.1. Էներգետիկայի բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած մարմինը

Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած մարմինն էներգետիկայի բնագավառում՝

դ) առաջարկություններ է ներկայացնում հանձնաժողովին մինչև 30 ՄՎտ դրվածքային հզորությամբ կայաններում էլեկտրական էներգիայի արտադրության՝ հանձնաժողովի կողմից տրամադրվող լիցենզիաների, ինչպես նաև ինքնավար էներգաարտադրողների և միկրոէներգաարտադրողների արտադրող կայանների միացման շրջանակներում գումարային հզորությունների առավելագույն չափաքանակների վերաբերյալ՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարական ծրագրերը.

դ1) առաջարկություններ է ներկայացնում հանձնաժողովին մինչև 30 ՄՎտ դրվածքային հզորությամբ պահեստավորող կայաններում էներգիայի պահեստավորման՝ հանձնաժողովի կողմից տրամադրվող լիցենզիաների շրջանակներում գումարային հզորությունների առավելագույն չափաքանակների, ինչպես նաև էներգիայի պահեստավորման լիցենզիաները մրցութային ընթացակարգով տրամադրելու վերաբերյալ՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարական ծրագրերը.

ե) համաձայնություն է տալիս հանձնաժողովի կողմից 30 ՄՎտ և ավելի դրվածքային հզորությամբ կայաններում էլեկտրական էներգիայի արտադրության և էներգիայի պահեստավորման լիցենզիաների տրամադրմանը՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարական ծրագրերը.

Հոդված 7. ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԿԱՄ ՊԱՀԵՍՏԱՎՈՐՈՂ ՀԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ՑԱՆՑԵՐԻ և ՏԵՂԱԿԱՅԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Նոր արտադրական կամ պահեստավորող հզորությունների, հաղորդման (փոխադրման) և բաշխման ցանցերի և տեղակայանքների կառուցման կամ գործող տեղակայանքների վերակառուցման են առաջնահերթության իրավունքով և օրենքով սահմանված կարգով՝ հաշվի առնելով հասարակական ծառայությունների մատուցման համար դրանց կառուցումը (վերականգնումը) նվազագույն ծախսումներով իրականացնելու հիմնավորումը: Օդային և մալուխային գծերի, բնական գազի և ջերմային ցանցերի կառուցման համար տրամադրված ուղիները և դրանց անվտանգության գոտիները պետք է բավարարեն տեխնիկական կանոնակարգերի և նորմատիվ իրավական այլ ակտերի պահանջները:

Հոդված 17. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հանձնաժողովն իրավասու է՝

ա) սահմանելու էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության, ջերմային էներգիայի արտադրության, էներգետիկայի բնագավառում հաղորդման (փոխադրման), բաշխման, համակարգի օպերատորի, էլեկտրաէներգետիկական շուկայի օպերատորի, էներգիայի պահեստավորման և շուկայի կանոններով սահմանված համակարգային ծառայությունների սակագները.

գ) իր սահմանած կարգով էներգետիկայի բնագավառում իրականացնելու լիցենզավորում՝ տրամադրելու լիցենզիաներ (այդ թվում՝ սույն օրենքով նախատեսված դեպքում իր կողմից սահմանված պայմաններով և կարգով իրականացվող մրցութային ընթացակարգով), երկարաձգելու դրանց գործողության ժամկետները, վերաձևակերպելու, կասեցնելու և դադարեցնելու դրանց գործողությունը, ինչպես նաև սահմանելու լիցենզիաների պայմանները, վերահսկելու դրանց կատարումը և կիրառելու սույն օրենքով սահմանված պատասխանատվության միջոցները.

Հոդված 21. Սակագների ՁԵԱՎՈՐՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետությունում վերականգնվող էներգետիկայի, ինչպես նաև էներգիայի պահեստավորման զարգացումը խթանելու, պետություն-մասնավոր գործընկերության գործարքները խրախուսելու և սպառողների սակագների վրա հնարավոր բացասական ազդեցություններն էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարական ծրագրերին համահունչ մեղմելու նպատակով լիցենզավորված անձանց համար հանձնաժողովը կարող է կիրառել հաստատուն սակագներ կամ սակագնային կարգավորման այլ ձևեր ու մեխանիզմներ:

Հոդված 22. Սակագների ՍԱՀՄԱՆՈՒՄԸ և ԿԻՐԱՌՈՒՄԸ

Սույն օրենքի 35-րդ հոդվածի 1.2-րդ ~~մասի~~և 35.1-ին հոդվածի 3-րդ մասերում նշված ~~համաձայն՝ օրենքով սահմանված գնման~~ երաշխիքի ժամկետը լրացած, ինչպես նաև 35-րդ հոդվածի 5-րդ և 35. համար հանձնաժողովը սակագին չի սահմանում:

Հոդված 23. ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՈՒՄԸ

Էներգետիկայի բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներն են՝
ա1) էներգիայի պահեստավորումը.

Սույն հոդվածով սահմանված լիցենզավորման ենթակա գործունեությունների էությունը կազմող գործառույթները սահմանվում են համապատասխան գործունեության լիցենզիաներով:

Կարգավորման ենթակա չեն՝

զ) մինչև 1 ՄՎտ դրվածքային հզորությամբ պահեստավորող կայանում էներգիայի պահեստավորման գործունեությունը՝ կառուցման և պահեստավորման ժամանակահատվածներում.

է) 1 ՄՎտ-ից ավելի դրվածքային հզորությամբ կայանում բացառապես սեփական կարիքների համար էներգիայի պահեստավորման գործունեությունը՝ պահեստավորման ժամանակահատվածում: Էլեկտրական էներգիա արտադրող անձի դեպքում սեփական կարիքի համար էներգիայի պահեստավորում է համարվում նաև սեփական արտադրության էլեկտրական էներգիայի կուտակումը, ինչպես նաև իր՝ որպես արտադրող, պայմանագրային պարտականությունները կատարելու համար անհրաժեշտ պահեստավորումը:

Հոդված 24. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Գործունեության լիցենզիա ստանալու վերաբերյալ հայտի քննարկման և գործունեության լիցենզիայի տրման, այդ թվում՝ սույն օրենքով նախատեսված դեպքում մրցույթի անցկացման կարգն ու պայմանները սահմանում է հանձնաժողովը՝ հաշվի առնելով պետություն-մասնավոր գործընկերության մասին օրենսդրության կիրառելի կարգավորումները:

Սկսած դիմողի կողմից բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը հանձնաժողով ներկայացնելու պահից՝ հանձնաժողովը սահմանված ժամկետում, որի տևողությունը չպետք է գերազանցի 80 աշխատանքային օրը (փոքր հիդրոէլեկտրակայանների և էներգիայի վերականգնվող այլ աղբյուրների կիրառմամբ գործող կայանների, ինչպես նաև էներգիայի պահեստավորման լիցենզիաների դեպքում՝ համապատասխան որոշում:

Հոդված 26. Լիցենզավորված գործունեության իրականացման համար ներկայացվող երաշխիքները

նձինք հանձնաժողովի սահմանած կարգով վերջինիս են ներկայացնում օրենսդրությանը չհակասող երաշխիքներ՝ կառուցման ժամանակահատված ներառող էլեկտրական կամ ջերմային էներգիայի արտադրության (ներառյալ՝ էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության) կամ էներգիայի պահեստավորման՝

ցենզիա ստանալու համար.

ցենզիայով ամրագրված կառուցման ժամանակահատվածը երկարաձգվելու դեպքում.

ցենզիայում վերակառուցման ժամանակահատված ամրագրելու համար, ինչպես նաև նշված ժամանակահատվածը երկարաձգվելու դեպքում.

ցենզիա ունեցող անձի կողմից օրենսդրության պահանջներին համապատասխան փորձաքննություն անցած կայանի կառուցման նախագիծը (դրական փորձագիտական եզրակացություններով) հանձնաժողով ներկայացնելու ժամկետը երկրորդ անգամ երկարաձգվելու դեպքում:

ույն հոդվածի 1-ին մասում նշված լիցենզիան ուժը կորցրած ճանաչվելու, լիցենզիայով ամրագրված ժամանակահատվածում կայանը չվերակառուցվելու դեպքերում ամբողջությամբ, իսկ լիցենզիայով ամրագրված կառուցման (վերակառուցման) ժամանակահատվածը երկարաձգվելու, արտադրության կամ պահեստավորման լիցենզիա ունեցող անձի կողմից օրենսդրության պահանջներին համապատասխան փորձաքննություն անցած կայանի կառուցման նախագիծը (դրական փորձագիտական եզրակացություններով) հանձնաժողով ներկայացնելու ժամկետը երկրորդ անգամ երկարաձգվելու դեպքերում կիսով չափ երաշխիքային գումարը ենթակա է փոխանցման պետական բյուջե՝ հանձնաժողովի սահմանած կարգով:

ոաշխիքով սահմանման ենթակա գումարի մեծությունը պետք է հավասար լինի սույն հոդվածի 1-ին մասի՝

ին և 4-րդ կետերով նախատեսված դեպքերում՝ կառուցվող կայանի հզորության և «Պետական տուրքի

մասին» օրենքով սահմանված բազային տուրքի (սույն հոդվածում այսուհետ՝ բազային տուրք) տասնապատիկի արտադրյալին.

րդ կետով նախատեսված դեպքում՝ ժամանակահատվածն առաջին անգամ երկարաձգելիս կառուցվող կայանի հզորության և բազային տուրքի քսանապատիկի, իսկ երկրորդ և հաջորդող երկարաձգումների պարագայում՝ երեսնապատիկի արտադրյալին.

րդ կետով նախատեսված դեպքերում՝ վերակառուցման արդյունքում կայանի՝ ավելացող հզորության և բազային տուրքի տասնապատիկի արտադրյալին:

ույն հոդվածում կայանի հզորություն է դիտարկվում դրա տեղակայվող հզորությունը՝ արտահայտված կիլովատտերով:

ույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերում հանձնաժողովի կողմից երաշխիքային գումարը պետական բյուջե փոխանցելու վերաբերյալ որոշման ընդունման պարագայում, եթե լիցենզավորված անձը նախկինում հանձնաժողով երաշխիք չի ներկայացրել, ներկայացրած երաշխիքի գործողության ժամկետը լրացել է կամ դրանով սահմանված (դրա շրջանակում առկա) գումարի չափը չի բավարարում նույն որոշման պահանջի ամբողջական ապահովման համար, ապա սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված գումարի՝ պետական բյուջե փոխանցելու պարտավորությունն ամբողջությամբ կամ չբավարարող մասով կրում է լիցենզավորված անձը:

իցենզավորված անձի ներկայացրած երաշխիքով սահմանված գումարը սույն օրենքով սահմանված դեպքերում պետական բյուջե չի փոխանցվում, եթե նրա կողմից լիցենզիայի պայմանների չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումը հետևանք է անհաղթահարելի ուժի:

ույն օրենքի իմաստով անհաղթահարելի ուժ է համարվում ցանկացած հանգամանք, դեպք կամ դրանց հետևանք, որը հանգեցրել է, հանգեցնում կամ կարող է հանգեցնել լիցենզավորված անձի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման և միաժամանակ բավարարում է հետևյալ պայմաններին՝

չի գտնվում լիցենզավորված անձի վերահսկողության ներքո.

լիցենզավորված անձը ձեռնարկել է բոլոր անհրաժեշտ միջոցները և ջանքերը (այդ թվում՝ նախազգուշական, այլընտրանքային, օրենսդրությամբ նախատեսված) նշված հանգամանքները

իցենզավորված անձի պարտավորությունների չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումն անհաղթահարելի ուժի հետևանք լինելու հանգամանքը ենթակա է հիմնավորման այդ լիցենզավորված անձի կողմից:

ույն օրենքի իմաստով, մասնավորապես, անհաղթահարելի ուժեր են՝

նական և տեխնածին աղետները, համաճարակները, բնության ուժերի արտասովոր դրսևորումները

ուղղորդվող հորդառատ անձրևներ, ձնաբքեր, սողանքներ), ատոմային, քիմիական կամ կենսաբանական աղտոտում, գործադուլները, հասարակական անկարգությունները, պստամբությունները, ահաբեկչությունները, պատերազմները, ներխուժումները, զինված հակամարտությունները, արտաքին թշնամու գործողությունները կամ շրջափակումը, որոնցից յուրաքանչյուրը տեղի է ունենում Հայաստանի Հանրապետության տարածքում, կամ ներգրավում է այն, ինչը գոյություն չի ունեցել կամ չէր կարող ողջամտորեն կանխատեսվել.

ետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ այլ իրավասու կազմակերպության ակտը, գործողությունը կամ անգործությունն այն դեպքում, երբ դրա արդյունքում չի տրամադրվել, երկարաձգվել համապատասխան պարտավորության կատարման համար անհրաժեշտ որևէ թույլտվություն կամ իրավունք կամ խոչընդոտվել է այդ պարտավորության կատարումը, պայմանով, որ լիցենզավորված անձը գործել է համաձայն օրենսդրության:

ույն հոդվածի 9-րդ մասը չի սահմանափակում լիցենզավորված անձի իրավունքը նկարագրվածից բացի այլ արտակարգ և անկանխելի դեպքեր ու հանգամանքներ ի հայտ գալու պարագայում դիմել հանձնաժողով՝ սույն հոդվածի 7-րդ մասի պահանջներին բավարարելու դեպքում դրանք ևս անհաղթահարելի ուժ ճանաչելու համար:»

Հոդված 27. Լիցենզիա ունեցող անձի գործարքային իրավունքների սահմանափակումը

Սույն հոդվածի 1-2-րդ կետերի դրույթները չեն տարածվում մինչև 30 ՄՎտ հզորությամբ կայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության կամ էներգիայի պահեստավորման լիցենզիա ունեցող անձանց, ինչպես նաև մինչև 30 ՄՎտ գումարային հզորությամբ մեկից ավելի կայաններում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության կամ էներգիայի պահեստավորման լիցենզիաներ ունեցող անձանց վրա, եթե նրանք չունեն այլ լիցենզիաներ, որոնց դեպքում պահանջվում է սույն հոդվածի 1-2-րդ կետերով նախատեսված համաձայնեցում:

Հոդված 28. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գործունեության լիցենզիա ունեցող անձը պարտավոր է՝

ա1) արտադրության կամ պահեստավորման լիցենզիա ստանալու համար հանձնաժողով ներկայացված փաստաթղթերի (այդ թվում՝ դրանցով ամրագրված իրավունքների) փոփոխության դեպքում նախապես, իսկ այդ մասին իրեն հայտնի չլինելու դեպքում այդ մասին տեղեկանալուց հետո՝ հիմնավորումները և փոփոխված փաստաթղթերը.

ա2) արտադրության կամ պահեստավորման լիցենզիա ստանալու, այդ թվում՝ արտադրության կամ պահեստավորման (վերակառուցման) ժամանակահատված ամրագրելու համար անհրաժեշտ իրավունքն օրենսդրությամբ սահմանված կարգով դադարելու դեպքում (այդ թվում՝ իրավունքը հավաստող փաստաթղթի գործողության ժամկետը չերկարաձգվելու դեպքում) այդ մասին տեղեկանալուց հետո՝ 15-օրյա ժամկետում, տեղեկացնել հանձնաժողովին.

Հոդված 30.1 Գործունեության լիցենզիայի կասեցումը և դադարեցումը

Լիցենզավորված անձի գործունեության լիցենզիան կարող է կասեցվել «Լիցենզավորման մասին»

Հայաստանի Հանրապետության օրենքով, սույն օրենքով կամ այլ օրենքներով նախատեսված դեպքերում, էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա ունեցող անձի՝ տվյալ կայանի համար տրամադրված ջրօգտագործման թույլտվությունը ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մարմնի կամ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած ակտի հիման վրա կասեցվելու դեպքում, ինչպես նաև սույն օրենքին կամ հանձնաժողովի հաստատած կարգին համապատասխան երաշխիք չներկայացնելու դեպքում:

Լիցենզավորված անձի գործունեության լիցենզիան կարող է դադարեցվել «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, սույն օրենքով կամ այլ օրենքներով, ինչպես նաև հետևյալ դեպքերում.

ա) արտադրության կամ պահեստավորման լիցենզիա ունեցող անձը լիցենզիայով սահմանված կառուցման ժամանակահատվածում չի ավարտել կայանի կառուցման աշխատանքները, հանձնաժողովի սահմանած կարգով չի դիմել լիցենզիայի պայմաններում փոփոխություններ կատարելու համար, կամ հանձնաժողովը մերժել է փոփոխություններ կատարելու դիմումը, և արտադրության կամ պահեստավորման լիցենզիա ունեցող անձը մինչև կառուցման ժամանակահատվածի ավարտը չի վերացրել մերժման հիմքերը և հանձնաժողով չի ներկայացրել համապատասխան հիմնավորող փաստաթղթեր.

բ) արտադրության կամ պահեստավորման լիցենզիա ունեցող անձը լիցենզիայով սահմանված կառուցման ժամանակահատվածում չի ավարտել կայանի կառուցման աշխատանքները, հանձնաժողովի սահմանած կարգով չի դիմել լիցենզիայով սահմանված կառուցման ժամանակահատվածը երկարաձգելու հայտով, կամ հանձնաժողովը մերժել է ներկայացված հայտը, և արտադրության կամ պահեստավորման լիցենզիա ունեցող անձը մինչև կառուցման ժամանակահատվածի ավարտը չի վերացրել մերժման հիմքերը և հանձնաժողով չի ներկայացրել համապատասխան հիմնավորող փաստաթղթեր.

գ) արտադրության կամ պահեստավորման լիցենզիայով ամրագրված կառուցման (վերակառուցման) ժամանակահատվածում հանձնաժողովը կասեցրել է ~~արտադրության~~ լիցենզիան, և մինչև կառուցման

դ) էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա ունեցող անձի՝ տվյալ կայանի համար տրամադրված ջրօգտագործման թույլտվությունն ուժը կորցրած ճանաչվելու կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ջրօգտագործման թույլտվության գործողության ժամկետը չերկարաձգվելու դեպքում՝ ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մարմնի կամ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած ակտի հիման վրա.

ե) արտադրության կամ պահեստավորման լիցենզիա ստանալու, այդ թվում՝ արտադրության կամ պահեստավորման (վերակառուցման) ժամանակահատված ամրագրելու համար անհրաժեշտ իրավունքն օրենսդրությամբ սահմանված կարգով դադարելու դեպքում (այդ թվում՝ իրավունքը հավաստող փաստաթղթի գործողության ժամկետը չերկարաձգվելու դեպքում)՝ պետական իրավասու մարմնի կամ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած ակտի կամ համապատասխան պայմանագրի գործողության դադարեցման հիմքով:

Հոդված 33. Էլեկտրական էներգիայի մեծածախ առևտրի լիցենզիան

Էլեկտրական էներգիայի մեծածախ առևտրի լիցենզիա չի կարող տրվել երաշխավորված մատակարարին, էլեկտրական էներգիայի արտադրության, էներգիայի պահեստավորման, էլեկտրաէներգետիկական շուկայի օպերատորի, էլեկտրաէներգետիկական համակարգի

օպերատորի, ինչպես նաև էլեկտրական էներգիայի հաղորդման ու էլեկտրական էներգիայի բաշխման լիցենզիա ունեցող անձանց:

Հոդված 35. ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐԸ

Սույն հոդվածով սահմանված էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիաները տրվում են՝ հաշվի առնելով էլեկտրաէներգետիկական համակարգի անվտանգության և հուսալիության ապահովումը, տեղական պաշարների արդյունավետ օգտագործման անհրաժեշտությունը, ներքին շուկայի սպառողների շահերի պաշտպանությունը՝

ա) մինչև 30 ՄՎտ դրվածքային հզորությամբ ~~վերականգնվող էներգետիկ ռեսուրս օգտագործող~~ կայաններում էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիաների պարագայում՝ նաև հաշվի առնելով էներգետիկայի բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած մարմնի՝ Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարական ծրագրերից բխող առաջարկությունները՝ տվյալ կայանների ~~տարեկան~~ գումարային հզորությունների առավելագույն չափաքանակների վերաբերյալ, բացառությամբ սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված դեպքերի.

5. Այն դեպքում, երբ առկա է միայն առանց օրենքով սահմանված՝ էլեկտրաէներգիայի գնման երաշխիքի վերականգնվող էներգետիկ ռեսուրս օգտագործող կայանում էլեկտրական էներգիա արտադրող կայանների գումարային հզորությունների չափաքանակ, նման կայանում էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա կարող է տրամադրվել, իսկ բացառապես սեփական կարիքների համար էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա ստացած անձին էլեկտրական էներգիայի վաճառքի իրավունք կարող է տրվել, եթե կառուցման ժամանակահատված ներառող էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա ստանալու համար դիմողը կամ բացառապես սեփական կարիքների համար էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա ստացած անձը, հանձնաժողովի սահմանած կարգին համապատասխան, հրաժարվում է սույն հոդվածի 1.2-րդ մասում նշված գնման երաշխիքից, որից հետագայում այլևս օգտվել չի կարող:

Հոդված 35.1. ՊԱՀԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐԸ

ներգիայի պահեստավորման լիցենզիա ունեցող անձին տրվում է լիցենզիայով սահմանված տարածքում էներգիա պահեստավորող կայան կառուցելու (վերակառուցելու), շուկայի կանոնների համաձայն մեծածախ շուկայում էլեկտրական էներգիա գնելու և վաճառելու, շուկայի մասնակիցներին պահեստավորման ծառայություն մատուցելու իրավունք:

ներգիայի պահեստավորման լիցենզիան տրվում է էներգիայի պահեստավորման երաշխիքով կամ առանց այդ երաշխիքի՝ նման լիցենզիա ստանալու մտադրություն ունեցող անձի կողմից երաշխիքից՝ հանձնաժողովի սահմանած կարգին համապատասխան հրաժարվելու դեպքում:

ներգիայի պահեստավորման երաշխիքով լիցենզիայի շրջանակում հանձնաժողովի կողմից էներգիայի պահեստավորման ծառայության սակագնի սահմանման վերաբերյալ առաջին որոշումն ուժի մեջ մտնելու պահից 15 տարվա ընթացքում լիցենզիայում նշված կայանի միջոցով մատուցվող պահեստավորման ծառայությունն ամբողջությամբ ենթակա է ձեռքբերման (օրենքով սահմանված՝ էներգիայի պահեստավորման երաշխիք): Օրենքով սահմանված՝ էներգիայի պահեստավորման երաշխիքից օգտվելու դեպքում լիցենզավորված անձն իրավունք չունի հետագայում հրաժարվելու

դրանից: Էներգիայի պահեստավորման լիցենզիան ուժը կորցրած ճանաչվելու պարագայում տվյալ կայանում էներգիայի պահեստավորման նոր լիցենզիա տրամադրվելու դեպքում սույն մասով նախատեսված ժամկետը հաշվարկվում է տվյալ կայանի համար սակագնի սահմանման վերաբերյալ առաջին որոշումն ուժի մեջ մտնելու պահից:

ներգիայի պահեստավորման երաշխիքով լիցենզիա ունեցող անձը հանձնաժողովի սահմանած սակագնով պարտավոր է էներգիայի պահեստավորման ծառայություն մատուցել էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի կարգավարական հրահանգներին համապատասխան՝ շուկայի կանոններով սահմանված դեպքերում և կարգով:

այաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարական ծրագրերից բխող՝ էներգետիկայի բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած մարմնի առաջարկի դեպքում էներգիայի պահեստավորման լիցենզիաները տրվում և համապատասխան սակագները սահմանվում են հանձնաժողովի կողմից անցկացվող մրցույթի արդյունքով՝ հաշվի առնելով պետություն-մասնավոր գործընկերության մասին օրենսդրության կիրառելի կարգավորումները:

ներգիայի պահեստավորման լիցենզիաները տրվում են՝ հաշվի առնելով նաև էներգետիկայի բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած մարմնի՝ Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարական ծրագրերից բխող՝ պահեստավորող կայանների գումարային հզորությունների առավելագույն չափաբանակների վերաբերյալ առաջարկությունները, 30 ՄՎտ և ավելի դրվածքային հզորությամբ կայանների պարագայում՝ նաև ստանալով սույն մասում նշված լիազորած մարմնի համաձայնությունը:

լեկտրական էներգիայի (հզորության) հաղորդման կամ Էլեկտրական էներգիայի բաշխման լիցենզիա ունեցող անձին արգելվում է զբաղվել էներգիայի պահեստավորման գործունեությամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ՝

ահեստավորող կայանն ամբողջությամբ ինտեգրված է համապատասխանաբար հաղորդման ցանցում կամ բաշխման ցանցում, օգտագործվում է բացառապես էլեկտրաէներգետիկական համակարգի անվտանգության և հուսալիության ապահովման համար և առկա է այդ գործունեությամբ զբաղվելուն համաձայնություն տալու մասին հանձնաժողովի որոշումը.

իաժամանակ առկա են հետևյալ պայմանները.

ա. այլ անձինք սույն օրենքի համաձայն չեն ստացել էներգիայի պահեստավորման գործունեությամբ զբաղվելու իրավունք կամ չեն կարողացել պատշաճ ժամկետներում մատուցել պահեստավորման ծառայություն,

բ. պահեստավորող կայանն անհրաժեշտ է էլեկտրական էներգիայի (հզորության) հաղորդման կամ Էլեկտրական էներգիայի բաշխման լիցենզիա ունեցող անձին սույն օրենքով և շուկայի կանոններով սահմանված իր պարտականությունները կատարելու համար՝ էլեկտրաէներգետիկական

համակարգի արդյունավետ, հուսալի և անվտանգ շահագործման համար, և պահեստավորող կայանը չի օգտագործվելու շուկայում էլեկտրաէներգիա գնելու կամ վաճառելու համար,

գ. հանձնաժողովը, գնահատելով սույն կետի «ա» և «բ» ենթակետերով նախատեսված պայմանների առկայության հանգամանքը, էլեկտրական էներգիայի (հզորության) հաղորդման կամ Էլեկտրական էներգիայի բաշխման լիցենզիա ունեցող անձին իր որոշմամբ համաձայնություն է տվել զբաղվել էներգիայի պահեստավորման գործունեությամբ:

լեկտրական էներգիայի (հզորության) հաղորդման կամ Էլեկտրական էներգիայի բաշխման լիցենզիա ունեցող անձի կողմից սույն օրենքի համաձայն էներգիայի պահեստավորման գործունեության իրավունք ստանալուց հետո համապատասխան պահեստավորող կայանը վերջինիս կողմից կարող է շահագործվել բացառապես սույն հոդվածի 77-րդ մասի 1-ին կետում կամ նույն մասի 2-րդ կետի «բ» ենթակետում նշված նպատակներով:

Հոդված 39.1. Ընդհանուր սկզբունքները

Էլեկտրաէներգետիկական մեծածախ և մանրածախ շուկայի առևտրի մասնակիցներին ծառայություններ են մատուցում էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորը, էլեկտրաէներգետիկական շուկայի օպերատորը, էլեկտրական էներգիայի (հզորության) հաղորդման լիցենզիա ունեցող անձը, էլեկտրական էներգիայի բաշխման լիցենզիա ունեցող անձը, էներգիայի պահեստավորման լիցենզիա ունեցող անձը, ինչպես նաև հաշվեկշռման ծառայության մատուցման իրավունք ստացած՝ արտադրության լիցենզիա ունեցող անձը:

Էլեկտրաէներգետիկական շուկայում չեն կարգավորվում՝

գ) էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության կամ էներգիայի պահեստավորման լիցենզիա ունեցող անձանց կողմից ներքին շուկայի պահանջարկը բավարարվելուց հետո համապատասխանաբար վաճառվող էլեկտրական էներգիայի (հզորության) և մատուցվող էներգիայի պահեստավորման ծառայության գները:

Հոդված 39.2. Էլեկտրաէներգետիկական մեծածախ և մանրածախ շուկաների առևտրի մասնակիցները

Էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկային մասնակցում են էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության, մեծածախ առևտրի, մատակարարման, երաշխավորված մատակարարման, հաղորդման, բաշխման, էներգիայի պահեստավորման լիցենզիա ունեցող անձինք, ինչպես նաև միկրոէներգաարտադրողները և որակավորված սպառողները:
Էլեկտրաէներգետիկական շուկայի օպերատորի, էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի, ինչպես նաև էլեկտրական էներգիայի հաղորդման ու էլեկտրական էներգիայի բաշխման, էներգիայի պահեստավորման լիցենզիա ունեցող անձանց և շուկայի առևտրի մասնակիցների փոխհարաբերությունները սահմանվում են շուկայի կանոններով:

Հոդված 42. Հանձնաժողովի կողմից կիրառվող պատասխանատվությունը

այանի կառուցման ժամանակահատվածում էլեկտրական (ներառյալ՝ էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված) կամ ջերմային էներգիայի արտադրության կամ էներգիայի պահեստավորման լիցենզիա ունեցող անձի, էլեկտրաէներգետիկական համակարգի

օպերատորի, էլեկտրաէներգետիկական շուկայի օպերատորի, էլեկտրաէներգիայի մեծածախ առևտրի լիցենզիա ունեցող անձի, էլեկտրաէներգիայի մատակարարման լիցենզիա ունեցող անձի (բացառությամբ էլեկտրաէներգիայի երաշխավորված մատակարարի), գազամատակարարման համակարգի օպերատորի, էլեկտրական էներգիայի (հզորության) կամ ջերմային էներգիայի հաղորդման կամ բնական գազի փոխադրման լիցենզիա ունեցող անձի, մինչև 30 ՄՎտ դրվածքային հզորություն ունեցող կայաններում էլեկտրական էներգիա արտադրող կամ էներգիա պահեստավորող լիցենզավորված անձի կողմից սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված արարքը կատարելն առաջացնում է նախազգուշացում:

Հոդված 56.1. Ինքնավար էներգաարտադրության կազմակերպումը

Բաշխման լիցենզիա ունեցող անձը պարտավոր է ինքնավար էներգաարտադրողի կարգավիճակ ստանալու մտադրություն ունեցող սպառողի դիմումի հիման վրա ապահովել վերջինիս արտադրող տեղակայանքի միացումը բաշխման ցանցին՝ շուկայի կանոններով սահմանված կարգով, իսկ երաշխավորված մատակարարը՝ կնքել փոխհոսքերի պայմանագիր՝ հանձնաժողովի սահմանած օրինակելի ձևին համապատասխան՝ սույն օրենքի 5.1-ին հոդվածի 2-րդ մասի «դ» կետում նշված միացման գումարային հզորությունների առավելագույն չափաքանակի շրջանակում: